

Միջագետոց նուաճումն:

Նախ քան Հայաստան նուաճելն Արարացիք Օմարի խալիֆու թեան ժամանակ (634-644) արշաւեցին Իյադ Ի. Ղանմի առաջնորդութեամբ Միջագետք եւ գրաւեցին Հայոց Միջագետոց բոլոր գլխաւոր քաղաքները, հասնելով մինչեւ Խլաթ, որի առումն՝ ըստ մեր պատմագրի՝ 20 թ. տեղի ունեցաւ: Այս հատածն, որի մէջ մանրամասն կը յիշին տեղացի բնակիչներին նւիրած խաղաղութեան պայմանները, վերին աստիճանի հետաքրքրական է, լուսարանելով արարացոց՝ իբրեւ երկրի նոր տերերի՝ յարարելութիւնն առ քրիստոնեայ եւ սլաւիրոն բնակիչք: Ի նկատի է առնելու հարկաւ, որ տեղեկութիւնս հիմնւած է քառասոր՝ զանազան աղբիւրներից քաղած՝ աւանդութեանց վերայ, որոնք մեծ զգուշութիւն կը պահանջեն:

Ինձ պատմել է Գաւուդ Ի. Աբդուլհամիդ, Ռաքքայի՝ գատաւորը՝ իւր հօր, իւր պապի, իսկ վերջինս Մայմուն Ի. Միհրանի ասելով՝ թէ ամբողջ Միջագետք նւաճել է Իյադ Ի. Ղանմ, որին Օմար Ի. Խատտաբ նշանակեց (այստեղ) կառավարիչ՝ Աբու Օբայդայի մահից յետոյ: Աւերջինս նշանակած էր նորան Ասորիքի վերայ, որից յետոյ Օմար Ի. Խատտաբ գրեց Եզիդ Ի. Աբու Սուֆեանին: Ապա կառավարեց Ասորիքում Մուաւիայ, իսկ Իյադ՝ Միջագետքում:

Ինձ պատմել է Հուսէյն Ի. ալ-Ասվադ, թէ՛ ինչպէս նորան աւանդել է Եահեայ Ի. Ադամ Միջագետոց բնակչաց եւ սորա՝ Սուլէյման Ի. Աթայ ալ-Քարշիի ասելով՝ Աբու Օբայդայ ուղարկեց Իյադ Ի. Ղանմին Միջագետք եւ ինքն վախճանեցաւ այնտեղ. նորանից յետ Օմար նշանակեց Ղանմին կառավարիչ:

1 Հնոց *Νικηφόριον* (Steph. Byz. de urbibus et populis; Ptol., Strabo XVI) *Nicephorium* (Plin.), որ ապա *Καλλίνικος* կը կուէր, Եփրատ եւ Բալիխ գետերի խառնուրդի մօտ: Հարուն ալ-Ռաշիդ վերանորոգեց եւ պայծառացրեց քաղաքը, ուր նա փոխադրեց խալիֆներին աթոռը: